



"ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ." ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1905

ԹԻՒ 5

ԱԼԷՔՍԱՆՏԵՐ ՍԵԼՔՐԻՔ

Գրեթէ երկու հարիւր տարիներէ ի վեր Անգղիացի տղոց ամէնէն սիրելի գիրքերէն մէկն եղած է Ռ. Ալեքսանտրի Գրեթէ, որ բաւական թուով լեզուներու թարգմանուած է, ինչպէս նաև Հայերէնի: Գիրքը կը պատմէ, ինչպէս թերևս գիտեն մեր ընթերցող տղոց մէն ոմանք, անմարդարնակ կղզի մը ինկած մարդու մը նշանաւոր արկածները: Պատմութիւնը կեղծիք, այսինքն չինձու է, բայց անոր հեղինակին Տէ Ֆոյի թելադրուեցաւ Ալեքսանտրը Սէլքրքի ճշմարիտ պատմութեան: Այս մարդը ծնաւ Սկոթլանդ մէկ փոքրիկ գիւղին: Լարկոյի մէջ որ Հիւսիսային Իռլանդիայի եզերքն է: Ալեքսանտր Սէլքրքի մայրը, որովհետև անիկա իր եօթներորդ որդին էր, անոր համար կը սպասէր մեծ բաներ, բայց հայրը խորհեցաւ թէ աւելի ազնկ էր որ տղան իր արհեստին հետևէր և ըլլար խաղախորդ (տապապաղ) և կօշկակար: Բայց տղան անկարգ բնաւորութեան տէր ըլլալով՝ փախաւ: Քանի մը տարի ետքը նորէն տուն դարձաւ, բայց դարձեալ չթողուց իր անկարգ վարքը և երկրորդ անգամ նաւաստի եղաւ: Կոխ ըրաւ նաւագետին հետ, և երբ նաւը հասաւ Ժուան Ֆերնանտէզ փոքր կղզին, Հարաւային Ամերիկայի արևմտեան կողմը, որոշեց նաւը թողուլ: Նաւագետը ուրախ ըլլալով թէ անկէ պիտի ազատուէր, ցամաք հանեց զանիկա քիչ մը ուտելիքով և ուրիշ պիտոյքներով, և թէպէտ



ղիական երկու նաւեր այդ կղզին հանդիպեցան 1709ին, Սէլքրքի հոն չորս տարի մնալէն ետքը: Նաւ առնուեցաւ Սէլքրքի, վերադարձաւ իր բնիկ գիւղը, ուր կանգնուեցաւ անոր մէկ արձանը, որ կը ցուցուի այս պատկերին մէջ: Ալեքսանտրը Սէլքրքի վերջապէս մեռաւ ծովու վրայ:

ՐԱՑ ԴՈՒՈՒՆ

(Պատ. Էպիտոմա Է. Բենթ)

Տխուր իրիկուն մըն էր: Անձրիք և գիշերուան ստուերները կը մթընցընէին քաղաքը: Պտոյտէս յողմած էի, և ցուրտ անձրևին տակ կը սարսըռայի: Քաղաքին փողոցներուն մէջ շատ փորձութիւններ կային և շատեր անոնց մէջ ընկղմած էին: Ինչ տխուր պատկեր սարսուցանող անձրևին մէջ սեռնել այն յողմած, ապերժանիկ և փորձութեան մէջ ինկած հողիները: Անոնք երջանիկ բնակարան մը չունէին ունէ տեղ: Ապաստանելու տեղ մը չկար անոնց համար: Մինչ կը շարունակէի ճամբաս, տեսայ եկեղեցւոյ մը բաց դուռը: Ինչպէս ազուոր և հիւրասէր կ'երևնար ա՜նիկա՛ ինչ ապահով ապաստանարան մըն էր փորձութեան մէջ գտնուածներուն համար: Եւ երկրորդապահոյն լուինչ սիրուն խումբ մը հաւաքուած էր հոն, որոնք կ'երգէին փրկչին օրհնաբանութիւն անոր տաճարին մէջ: Բաց ԴՈՒՈՒՆ: Ո՛հ, յողմած հողիներ,

յետոյ տղան աղաչեց նորէն նաւն բնդունուիլ, հոն թողուեցաւ, և մինակ մնաց այն կղզին մէջ չորս տարի չորս ամիս: Գլխաւորապէս կ'ուտէր այծեր, որոնցմէ շատ կը գտնուէին այն կղզին մէջ, և երբ իր վառօդը հատաւ, այծերը կը բռնէր արագ վազելով: Անգ-

Չեղի համար հանգիստ կայ: Երկիրս յոգնութիւն կը բերէ: Մենք շուտով կ'առնենք անոր փորձը: Թէպէտ տակաւին դեռ ահա եղած ըլլանք, բայց շուտով պիտի հասկնանք թէ այս տեղի բոլոր ճամբաները և վայելքները չեն կրնար գոհացնել մեզ: Երբ անոնց հետեւինք, յոգնութիւն կը զգանք միայն: Մէկ ճամբայ կայ որ կը տանի հանգստեան. այն ճամբան որ մեզ կ'առաջնորդէ փրկչին սիրոյն դուռը, բաց դուռ մը: Դուռ՝ որ մինչև իսկ այս վայրկեանիս կռնակի վրայ բաց է: Հանգիստ կայ փրկչին ոտքը:


Բաց Դուռը: Մենք փորձութեան մէջ ենք: Չենք կրնար ըսել թէ այնքան փոքր չենք որ յարձակում կրենք երկրիս փասակար ազդեցութիւններէն: Անոնք մեր վրայ կը յարձակին անակնկալ կերպով: Մեզ կը յարթեն և կը տիրեն մեր վրայ: Մենք յարձակում կը կրենք մեզ փորձողներէն, մեր կիրքերէն և մեր անորժակներէն: Եթէ մենք մեզի թողուինք, մէկ վայրկեան անգամ ապահով չենք: Բայց ահա Ապաստանի Տուն մը, բաց Դուռ մը, փրկչին բազուկներուն մէջ որո՞ւ երբեք հասած է փորձիչին նետը: Ո՞վ փաստեցաւ երկրիս ունէ սաստիկ յարձակումներէն երբ Աստուծոյսէրը և Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ ներկայութիւնը մարդկային հոգւոյն մօտ կը կենար:

Բաց Դուռը: Մենք երբեք մենք զմեզ հեռու կը զգանք տունէն, միտակ, առանձին: Անպերէն մէկը որ կրնայ մթնցնել դեռատի սիրտ մը, կարօտութիւնն է ընկերի մը զոր երկրիս ոչ մէկ շարիքը կարող է յաղթել, կարօտութիւնն է Մէկու մը որ եղբորմէ աւելի կարեկից է: Ունինք բարեկամութիւն մը որ չկընար խզուիլ, այն է՝ Երկնային Տան ընկերակցութիւնը որուն վրայ անկարելի է որ թըշնամին յարձակի, փրկչին սէրը և անոր զաւակներուն սէրը: Մենք յառաջ կը նայինք այն Տանը այն ուրախութեան յայտնուելուն, երբ պիտի տեսնենք երես առ երես: Ո՛հ, ականջ դրէք: Չէք կրնար լսել յաղթական երգերուն ձայնը, քնարներուն եղանակը, որոնց կ'ընկերանան երկնից բոլոր սերովբեական մեղեդիները: Եւ ի՞նչ ուրախութիւն, մտածել թէ կայ Բաց Դուռ մը հիմա այս օրհնութիւններուն: Ապաշխարութեամբ, արթթով, ինքզինքնիս յանձնելով և վստահութիւնով կ'անցնինք

այս Բաց Դուռնէն անընդհատ օրհնութեան կեանքի մը:

ՍԱՐԳԻԿԷ

Օսմանեան պետութեան ամէնէն բարեբեր մասերէն մէկն է ընդարձակ Լիւդիական դաշտը Չմիւռնիոյ արևելեան կողմը: Հոս ժամանակաւ զօրաւոր տէրութիւն մը կար, որուն մայրաքաղաքն էր Սարգիկէ, և կարևորութեան կողմանէ երկրորդ քաղաքն էր Մագնիսիա, հիմակուան Մանիսան, կրեսոս, Լիւդիոյ վեհապետը, աշխարհիս ամէնէն հարուստ իշխանը կը նկատուէր, և հիմա ալ հասարակ բան մը եղած է քանի մը երկիրներու մէջ ըսել սկրեսոսի չափ հարուստ: Ես սակայն կրեսոս գահընկէց եղաւ Մեծն Աղեքսանդրէ, Բրիտանոսէ 546 տարի առաջ: Լիւդիական տէրութիւնը հին աշխարհի մեծ արհեստներու տէրու-



երբեք կուր չես ըներ մեղի, միւս տղոց, նման,՝ հարցուց տղայ մը ուրիշ տղու մը: «Ինչու որ ես փոխադարձաբար չեմ խօսիր: Երբ տղէ մը ինծի դէմ կծու խօսք մը կը լսեմ, հանգարտութիւն կը պահեմ:»

Շատ մարդոց կեանքին մէջ պատահած նեղութիւններուն և դժուարութիւններուն մեծ մասը պիտի թեթեւնար եթէ իրենց մանկութեան մէջ սորվէին այն դասը զոր աղէկ սորված էր այս պղտիկը, այսինքն «Հանդարտութիւն պահել»: Եթէ կծու խօսք մը կը վերաւորէ քեզ, անիկա չանուշար բարկութեամբ պատասխանելով, Եթէ ընաւ չպատասխանես, անիկա կը մնայ ուր որ է: Եթէ լեզուդ չկրնայ զսպուիլ, ոչ ոք գիտէ թէ ի՞նչ պիտի ըլլայ հետեանքը: Ի՞նչ էր չէ քու խաղընկերիդ ինչեր ըսելը, քանի որ կը զսպես կիրքդ և կը սանձես լեզուդ: Տասը անգամ ներու իննին մէջ քու անոր տուած պատասխանդ է կուրին պատճառը: Ան թող ըսէ իր բոլոր ըսելիքը, և բսելու բան չթողու: այն ատեն պիտի տեսնես որ ամբողջ անհանգստութիւնդ քացած է շատ մը աւելի դիւրին կերպով քան եթէ դուն ալ փոխադարձաբար ըսէիր քու ըսելիքդ:



թիւնն էր: Սարգիկէ մասնաւորապէս համբաւաւոր էր փափուկ բրդեղէններ նաև կապերաներ պատրաստելու և ներկելու արհեստին կողմանէ: Կ'ըսուի թէ առաջին անգամ Լիւդիոյ տէրութեան մէջ էր որ դրամ կրատեցաւ, և թէ Լիւդացիք էին նարտի խաղը և ուրիշ խաղեր հնարողները, որոնք տակաւին կը խաղացուին: Այս վայրէմի քաղաքին գլխաւոր մնացորդներն են երկու սիւները որոնք կը ցուցուին հոս, և որոնց թուականը կը հասնի Հռոմէական ժամանակներու: Հոս Աքրոփոլիսի քանի մը աւերակները կան, որոնց վրայ դղեակը կը կանգնէր առաջ: Ունեք կը կարծեն թէ Սարգիկէի պեղումներուն շնորհիւ կարևոր գիւտեր կրնան ըլլալ որոնցմով աւելի ճոխանայ Կոստանդնուպոլսոյ հնախօսական շքեղ թանգարանը:

ԱՊԱՀՆՈՎՈՒԹԵԱՆ ԼԱՄԲԱՐԸ

Խորունկ ածխահանքերու մէջ գործողները լոյսի պէտք ունին: Լոյսը կը հայթայթուի գլխարկին ճակատը հաստատուած փոքրիկ լամպարի մը միջոցաւ, որով հանքահանները կրնան տեսնել իրենց գործը: Բայց շատ անգամ ածխահանքերու մէջ կը գտնուի վառող կազ մը, և վառ լամպար մը դանիկա կը բռնկցնէ և պայթում յառաջ գալով մահ և կորուստ կ'ըլլայ հետեանքը: Սըր Հըմֆրի Տէյվի 1845ին ատենները հնարեց ապահովութեան լամպար մը, որուն մէջ լամպարին բոցը կը փակուէր նուրբ թելէ հիւսուած

«ՀԱՆՎԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐ ՊԱՀԵՄ»
«Ի՞նչ է պատճառը, Յակոբ, որ դուն

փոքրիկ տուփի կամ գլանի մը մէջ, որ ջերմութիւնը իր մէջ կը պահէր, և ուստի կազը կրակ չէր առնէր:

«Տղայ մը կը ճանչայի», կ'ըսէ թերթի մը թղթակիցը, «որ ամխահանքի մը մէջ կը գործէր, և ամէն օր Տէյ-վիի լամբար մը կը գործածէր: Անոր պատուիրուած էր ծածկոցը լամբարին վրայ պահել, եթէ ոչ հանքին մէջի կազը կրնայ բռնկիլ և պատճառը լալ ահռելի պայթումի մը, որ կ'այրէ ու կը մեռցնէ հանքին մէջ գործողները և անոնց ձիերը: Օր մը անմիտ գործաւոր մը իր լամբարին վրայէն հանեց թերթէ հիւսուած ծածկոցը իր սիկարը վառելու համար, և ահա կազը իսկոյն կրակ առաւ: Սոսկալի կերպով այրեց այդ մարդը, և յետոյ սլացաւ հանքին մէջ բոցեղէն ամպի ձևով և իր առջև ելլող ամէն բան այրեց: Տղան, երբ տեսաւ որ բոցը իր կողմը կու գայ, կարելի եղածին չափ արագութեամբ պարապ կառք մը գլխիվար դարձուց և անոր ներքև մտաւ ծածկուեցաւ: Կրակը տղուն վրայէն անցաւ, չչելով, միկելով և գոռալով հնոցի պէս: Տղան, հասկցածին պէս թէ բոցը անցաւ, կառքը մէկ կողմ հրեց իր վրայէն և դուրս սողոսկեցաւ մոխիր կտրած և դողահար: Բայց կրակը թունաւորեր էր օդը, և հանքը լեցուցած էր ապականեալ կազով, որ մարեց ապահովութեան լամբարը և զինք մութը թողուց: Գլխէն քաշեց հանեց իր բրդեղէն գլխարկը և խոթեց իր բերանը նաև կոխեց քթին ծակերուն վրայ և վազեց կեանքը աղատելու համար: Տղուն ըրածը ահռելի վազք մըն էր մեռած և մեռնելու վրայ եղող հանքահաններուն վրայէն: Երբ բեմն գլխիվար կ'իյնար ձիու մը դիակին վրայ և յաճախ կը լսէր մեռնողներուն հեծութիւնները: Բայց վերջապէս յաջողեցաւ հասնիլ հանքին բերանը և մաքուր օդ շնչել դեռ չմեռած: Այսպէս իր կեանքը ազատուեցաւ, թէև երկար ատեն անցաւ մինչև որ անցաւ իր սարսափը:»

ՀՈՒՆ ՄԸ ՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԻ
Ճոք եղական պատմութիւն մը ունի: Բրիտանացի Ժողովուրդը շատ յարգանքով կը վարուի անոր հետ, վասն զի ան միայն ողջ մնացած է բոլոր այն շուններուն մէջ՝ որոնք Տեպլեյնի նաւով տարուեցան Հակարձային Շրջանակ խուզարկութեան գացող արշաւախումբին հետ: Հակառակ սաստիկ դժուարութիւններու և ախտէ բռնուելու վրտանգներուն, ճոք ողջ առողջ և զուարթ

էր երբ յիշեալ նաւը հասաւ Սկոտիա, երկար ատեն բանտարկուած մնայէն ետքը Հարաւային Բեեռի սառնամանիքին մէջ: Բոլոր միւս շուները որոնք բախիրի գործածուեցան, մեռան ցուրտէն և ընդացաւ (ըսքորփիթ) երբ ճոք միւս շներուն հետ ընտրուեցաւ արշաւախումբին հետ երթալու, անոնց մէջ ամէնէն անյուսալին կ'երևնար, և քիչ մնաց որ պիտի մերժուէր վերջին վայրկեանին, ուստի շատ զարմանալի է որ միայն անկա ողջ մնացած է սաստիկ փորձերէ անցնելէն ետքը: Հիմա այդ շունը լալ հանգիստ և յարգանք կը վայելէ: Անիկա երբեք նորէն պիտի ենթարկուի արգետք ամայի սառնադաշտերու սաստիկ ցուրտին, տարակուսելի է. վասն զի այսպիսի դառն փորձէ մը անցնելու բաւական կրնայ համարուիլ շան մը համար: Այդ նաւով վերադարձող գիտունները անկարելի է որ համոզուին ճոքէ բաժնուիլ իրենց ո՛րչափ ստակ խոստացուի ալ, նմանապէս ոչ



մէկը կարող է հրապուրել շունը որ բաժնուի իր հին բնկերներէն:

—***—

ՀԵՂՈՒԿ ՕԳ

Գիտենք թէ նիւթի երեք ձևեր կան, պինդ, հեղուկ և կաղային: Երկաթը պինդ է, ջուրը հեղուկ է և օդը կաղային: Գիտենք նաև թէ ջերմութեան աստիճանի փոփոխութիւնը կը փոխէ մարմիններուն վիճակը: Սաստիկ տաքութիւնը հեղուկ կը փոխէ. և թափուած երկաթէ շինուած ամէն բան շինուած է նախ երկաթը հալեցնելով և ուղուած ձևն ունեցող կաղապարի մէջ թափելով: Կապարը որ ուրիշ պինդ մարմին մըն է, հեղուկ վիճակի կը փոխուի շատ մը աւելի ցած աստիճան ջերմութիւնով քան զոր պէտք է երկաթը հալեցնելու համար: Չերմութեան աս-

տիճանի հակառակ փոփոխութիւն մը հակառակ արդիւնք յառաջ կը բերէ: Եթէ ջերմութեան աստիճանը բաւական պակասեցնենք, ջուրը, որ հեղուկ է, պինդ մարմին կը փոխուի, այն աստիճան պինդ՝ որ մարդիկ և ձիերը կրնան ապահով քալել սառած լճի մը վրայ: Շատ աւելի սաստիկ ցրտութիւն պէտք է պինդ մարմնի փոխելու համար սնդիկը, ջերմաչափին մէջի արծաթի նմանող այն հեղանիւթը: Աւերակելի խմբագիրը միայն և միայն մէկ անգամ տեսած է այդ աստիճան ցրտութիւն: Բայց ատիկա տաք եղանակ էր բաղդատմամբ այն ցրտութեան հետ որ կազերը հեղուկ կը փոխէ: Ասանկ ցուրտ մը արհեստական կերպով միայն կարելի է ձեռք բերել, և ատիկանախախնամական է: Մենք կրնանք գործածել պինդ ջուր, վասն զի կրնանք հալեցնել զանիկա, կամ կրնանք անցնել մեր ծարաւը նաև ուտելով: Բայց եթէ օդը յանկարծ հեղուկ փոխուի, ամէնքս ալ կը մեռնինք հեղձամահ: Չուրը կը սառի զրոյ աստիճանին վրայ: Միջիկը կը սառի զրոյէն 40 աստիճան ցած ցրտութեան մէջ: Բայց օդը զրոյէն 191 աստիճան վար ցրտութեան մէջ կը սառի: Հոս շատ հետաքրքրաշարժ պատկեր մը կայ: Դուք շատ անգամ տեսած էք կաթսային մէջ պարունակուած ջրին եռալը կրակին վրայ. բայց ահա կը տեսնէք կաթսայ մը որ կ'եռայ սառի կտորի մը վրայ: Կաթսան լեցուած է հեղուկ օդով և կ'եռայ, վասն զի սառը անկէ 191 աստիճան աւելի տաք է: Գրեթէ այսչափ տարբերութիւն չկայ կրակին ջերմութեան եւ ջրհորէն քաշուած ջուրին ջերմութեան մէջտեղ: Հարկաւ գիտունները միայն կրնան օդը հեղանիւթի վերածել իրենց գտած մեթոտներով: Հեղուկ օդով շատ մը շահեկան բաներ կրնան կատարուիլ: Միջիկը կրնայ սառիլ անոր մէջ, և այնքան պնդանալ որ զանիկա կրնաք իրը մուրճ գործածել զամեր զարնելու համար: Չգախիժէ (լաստիկ) գնտակ մը հեղուկ օդի մէջ դրուելով հաւկթի կեղևի չափ դիւրաբեկ կ'ըլլայ: Այսպիսի սաստիկ ցուրտի մէջ երկաթը կը կտորի ապակիի պէս:

—***—

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՐԾԸ
ՀԵՐԻՒԴԵԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Նոր Հերթիտեաններու հինաւուրց միսինոնարը Պատ, ճան ճ. ֆէթըն, հետեւալ խօսքերը ուղղեց անցեալ տարուան վերջը, զօրացնելու համար սիր-

տերը այն բոլոր ազնիւ ֆրիստոնեայ աշխատաւորներուն որոնք իրեն կ'օգնեն իր մեծ ձեռնարկը յառաջ տանելու մէջ:

Մեր առաքելութեան գործը յաջողութեամբ յառաջ կ'երթայ մեր աշխատութեան ասպարէզն եղած ամէն մէկ կողմին մէջ: Հիւսիսային Սանթոյէ, ուր Պատ. ձ. Բոպլըթ Մաքէնզի սկսաւ իր գործը ինը տարի առաջ կիսամերկ վայրենիներուն մէջ, առանց բառ մը անգամ գիտնալու անոնց լեզուներէն, սապէս կը գրէ. «Թէև քանի մը տարի առաջ ֆրիստոնէութեան դարձած բնիկներէն շատը կռակաշունտէն հալածուելու և սպաննուելու վտանգին ենթակայ էին, սակայն մեր տուած ֆրիստոնէական հրահանգութիւններուն վրայ թափուած Աստուածային օրհնութեամբ, և Բրիտանական մարտանաւի մը հրամանատարին այցելութեան, իշխանական ցոյցերուն և մարդասիրական քաղցր յորդորներուն շնորհիւ կը յառաջդիմէ մեր եկեղեցին: Մեր վեցամեայ վերջին Հաղորդութեան առթիւ 107 անձինք առաջարկեցին մկրտուելու և եկեղեցւոյ անդամ ընտրուելու: Քննուեցան խնամով վաթսուները չափահասներ և տասներորս տղաք մկրտուեցան: Անոնք Քուինսլընտի մէջ մկրտութիւններուն հետ միասին եկեղեցւոյ հաղորդութեան ընդունուեցան, և Տէրոջը Սեղանը նստողներուն թիւն եղաւ 260 հոգի: Ինը տարիներ առաջ հոս մեր ցամաք ելլելէն ի վեր Աստուծոյ օգնութեամբ կարող եղանք տեսնել 1,300 կռակաշունտներ իրենց կուռքերը մեր ժելով ֆրիստոնեայ ըլլալը, և ուրիշ միսիոնարներու օգնական զրկեցինք տասնմէկ զոյգ, այր և կին, իբրև բնիկ ուսուցիչներ: Ծովեղբերքին երկայնքովը երեսուն մը տեղի վրայ հիմա ամէն մարդ ֆրիստոնէութիւն կը դաւանի, և անոնք իրենց հոգևոր պէտքերը կը հոգան առանց դուրսէն դրամական օգնութիւն ընդունելու: Երկու գաւառներու մէջ, ուր կռակաշունտները այրեցին դպրոցը և վարժապետին տունը, և անոր մահուան ատենը որոշած էին ֆրիստոնի գործը ջնջել, ընդհակառակն հիմա վարժապետ կը խնդրեն իրենց համար, և իբր յիսունական բնակիչ ունեցող երկու գեղեր միացած են ֆրիստոնեայ ցեղապետի մը ներքև:»

Այսպէս Աստուած իր օրհնեալ գործը յառաջ կը տանի մեր միսիոնարներուն ձեռքով մեր կողմներէն շատերուն մէջ:

ԳՐԱՄԻՆ ԱՐԺԷՔԸ

Մենք շատ անգամ կը մտածենք թէ արդեօք շատ երիտասարդներ իրօք գիտեն դրամին յարգը, կ'ըսէ Տր. Բաուլընտ: Անոնցմէ ոմանք այնպէս կ'երևնայ թէ յիմարաբար կը վատենն ստակը և չնչին բաներու համար: Որչափ քիչ են անոնք որ կը ջանան իրենց ստակը խնայել և պահել ապագային պէտքերուն համար: Որչափ շատեր զանիկա կը գործածեն անզոյութեամբ և մինչև անգամ չար նպատակներու համար: Պէտք է հասկնանք սակայն թէ ստակն է մին այն յոյժ արժէքաւոր բաներէն որոնք կրնան գալ մեր ձեռքը, և թէ Աստուած մեզմէ պատասխան կը պահանջէ զանիկա ինչպէս գործածելու համար, ճիշդ ինչպէս որ պատասխան կը պահանջէ մեր ժամանակը և տաղանդները ինչպէս գործածելու համար: Ստակը ամէն բանի միջոց է: Անով կրնանք օրհնութիւն կամ անէժք բերել մեր կեանքերուն: Եթէ իմաստութեամբ ծախսենք զանիկա, կրնանք օգտուիլ անկէ մեր յառաջդիմութեան համար, և կրնանք անոր միջոցաւ գանձ դիզել թէ՛ այս աշխարհին թէ՛ հանդերձեալ աշխարհին համար: Եթէ զանիկա անխելքութիւնով ծախսենք, կրնանք մեր վրայ բերել թշուառութիւն և մեղք: Խնայեցէք ձեր դրամը, պատանիներ և երիտասարդներ, և իմաստութեամբ գործածեցէք զանիկա: Ասով ըսել չենք ուզեր, հարկաւ, որ դուք կծծի և գծուծ ըլլաք: Մենք մեր մտքէն ալ չենք անցներ որ դուք զրկէք ձեր անձերը այն բաներէն որոնց իրօք պէտք ունիք: Բայց ըսել կ'ուզենք որ կանգ առնէք և խորհիք ձեր մէկ դահեկաննոցը կամ մէծիւտը ծախսելէ առաջ: Չեր ստակը պահեցէք ամէնէն աղէկ կերպով գործածելու համար: Ասկէ քանի մը տարի ետքը ձեր քանի մը հարիւր մէծխառնենայը կամ չունենայը հարուստ կամ աղքատ ըլլալնիդ կրնայ նշանակել ձեր կեանքին բոլոր մնացած օրերուն համար:

Խնդրեցէք Աստուծմէ որ օգնէ ձեզի ինչպէս ամէն բաներու նոյնպէս ալ ասոր մէջ: Քիչ բաներ կան ասկէ աւելի կարևոր:

ՓՈՒՔՐԻԿ ԼՈՒՍԱԻՈՐԸ

Ով փայլուն լուսաւորներ, Արդեօք ինչ էք, չե՞մ գիտեր. Երկրէս խիտ բարձր կ'երևնաք, իբր աղամանդ կը պլպլաք: «Միտ դիբ, մանկիկ, ինչ կ'ըսեմ,

Ես հաճոյքի պատճառ եմ քեզ նման փոքրիկներուն Որք կ'ուզեն աչք սևեռուն: Ես թէև եմ խիտ հեռուն, Գիշերն ի բուն եմ փայլուն. Կը պլպլամ, ինչո՞ւ, գիտե՞ս, Ձի լոյսէ եմ շինուած ես: Երբոր արևն անհրաժեշտ կու տայ ձեզի հըրաժեշտ, Լուսաւորներն կը փայլին խաւարին մէջ գիշերին:»

ՄԱՐՏԻ ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Table with 10 columns and 10 rows of numbers, likely a calendar or numerical grid.

Լուծեցին, Տէրոջիչք. — Խաչատուր Յ. Անտոնեան, Կարապետ Ա. Աղաճանեան: — Թուս. Գրեգորիս Պ. Պողէճեան, Բիւզանդ Աճերեան, Սեդրակ Յովսէփեան, Անդրանիկ Ա. Նիկողոսեան: —→→→→→

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ

Table with 10 columns and 10 rows of numbers, likely a calendar or numerical grid.

1. Փոքր մարտիներէն մին: 2. Սողոմոնեան տաճարին մէկ մասը: 3. Երեսը մը մասը (սեռական հոլով): 4. Երուսաղէմի մէկ թագաւորը: 5. Ոչեարին մէկ մասը և իսրայէլի մէկ թագաւորը: 6. Փոքրիկ միջնա մը և վատահոլութեան միջոց մը: 7. Պողոսի մէկ գործակիցը: 8. Մակարայ մը: 9. Խաչատուրի նմանութիւն բերուած է (տղէն ձախ): 10. Ամաս հուլիան մը:

Չընտրով կազմուած առաջին գաղաթնահայեաց գիծը կը կարգադրէ Մեծիւտ նաւահան ղեկավար, Երկրորդ գաղաթնահայեացը՝ ճեւղով և կրակով կործանուած չորս քաղաքներէն մէկը: Երրորդ գաղաթնահայեացը՝ եկեղեցական անօթ մը: Վերին շէջ գիծը՝ Պողոսի ուրիշ մէկ գործակիցը: Վերին շէջ գիծը՝ Գաթի մէկ քեռորդին: Վերջին գաղաթնահայեացը կը նշանակէ կախարչ:

Բոլոր գիծերն ալ վերին դեպի վար կարգաւ կ'պօղիս 80406 288822

Տարեկան բաժանորդագրին՝ 6 դահ. արծաթ կանխիկ, ամէն տեղոյ համար:

Ամերիկայի Միսիոնարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Ք. ԿԻՐՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Ի ՅԱՐԱՆ Ա. ՅԱՐԱ ՊՅԱՆԱՆ Անճանճըլար Եօզուշու, Ամերիկան խան